ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| Համարը | N 1579-Ն | Տեսակը | Ինկորպորացիա |
| Տիպը | Որոշում | Կարգավիճակը | Գործում է |
| Սկզբնաղբյուրը | ՀՀՊՏ 2010.12.15/63(797) Հոդ.1471 | Ընդունման վայրը | Երևան |
| Ընդունող մարմինը | ՀՀ կառավարություն | Ընդունման ամսաթիվը | 02.12.2010 |
| Ստորագրող մարմինը | ՀՀ վարչապետ | Ստորագրման ամսաթիվը | 07.12.2010 |
| Վավերացնող մարմինը | | Վավերացման ամսաթիվը | |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվը | 16.12.2010 | Ուժը կորցնելու ամսաթիվը | |

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ
⊟ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

Մայր փաստաթուղթ: Կառավ,02.12.2010,N 1579-Ն

| Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝ | Համապատասխան ինկորպորացիան՝ |
|---|---|
| Կառավ,16.02.2012,N 213-Ն | Կառավ,02.12.2010,N 1579-Ն |

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 դեկտեմբերի 2010 թվականի N 1579-Ն

## «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան և հիմնադրի կողմից սահմանված կարգով պետական կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ ուսումնասիրել սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի մեկամյա գործադրման փորձը և, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն այդ կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ. Սարգսյան

2010 թ. դեկտեմբերի 7
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 2-ի N 1579-Ն որոշման

## Կ Ա Ր Գ

## «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգը սահմանվում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան և կարգավորում է «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հաստատություն) շահույթի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. Հաստատության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:

3. Հաստատությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ՀՀՀՀՍ 37 ստանդարտի, ձևավորում է պահուստային կապիտալ:

4. Հաստատության հաշվետու տարվա շահույթը բաշխվում է հետևյալ ուղղություններով և չափերով՝

1) պահուստային ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 15 տոկոսի չափով (ռիսկեր և անորոշություններ՝ ներկա արժեքի և ապագայի դեպքեր, անբարենպաստ պայմանագրեր).

2) կուտակման ֆոնդ (ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և ոչ ընթացիկ ակտիվների վերանորոգման նպատակով)՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 35 տոկոսի չափով.

3) սպառման ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 50 տոկոսի չափով, որը ներառում է՝

ա. աշխատողների նյութական խրախուսման ֆոնդը (մասնագիտական և բարեխիղճ աշխատանքի համար),

բ. դրամական օգնության ֆոնդը (աշխատողների երկարատև հիվանդության, մահվան, աշխատողների հարազատների մահվան, ինչպես նաև ամուսնության և այլ առիթներով),

գ. բարեգործական ֆոնդը (սոցիալապես անապահով ընտանիքներից աշակերտներին օգնություն (հագուստ, տարրական դասարաններում անվճար սնունդ և այլն),

դ. այլ (կարող է ներառել կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված այլ նպատակներ):

5. Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը, հիմք ընդունելով սույն կարգի 4-րդ կետը, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը սահմանում է հաշվետու տարվա շահույթի բաշխման ուղղությունները և չափերը:

6. Տարեկան մինչև 3000.0 հազ. դրամ զուտ շահույթ ունեցող հաստատությունը, կոլեգիալ կառավարման մարմնի որոշմամբ, այն կարող է օգտագործել սույն կարգի 4-րդ կետով սահմանված մեկ կամ մի քանի ուղղություններով:

(6-րդ կետը լրաց. 16.02.12 N 213-Ն)

(Հավելվածը լրաց. 16.02.12 N 213-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար — Դ. Սարգսյան